

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց
Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #10



Հոկտեմբեր 2021

Երևան, Հայաստան

Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ	3
Մենդի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	10
R&D	13
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	14
Կոսմետիկա	16
Առողջապահություն	18
Այլ ոլորտներ	20
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ	25
Նորություններ և միջոցառումներ	27

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մանդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Պահածոյացված մսի և պատրաստի ուտեստների արտադրության և առևտրայնացման ոլորտի իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Ընկերությունը, որը գտնվում է Իսպանիայի կենտրոնում, մասնագիտացված է պահածոյացված մսի և պատրաստի ուտեստների արտադրության և առևտրայնացման ոլորտում: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների և առևտրային գործակալության համաձայնագիր՝ իր արտադրանքը խթանելու համար: Ընկերությունը փնտրում է պոտենցիալ գործընկերներ թիրախային երկրում՝ իր արտադրանքն առևտրայնացնելու համար՝ ցանկանալով մեծացնել շուկայի իր մասնաբաժինը:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cb789168-ef1a-42e3-b961-2dd88397fa36>

Ծածկագիր. BOES20210923001

Գյուղատնտեսական արտադրանքի (չոր լոբի) և փայտի գնդիկների մոլդովական արտադրողը փնտրում է գործընկեր տարածման ծառայությունների և/կամ արտադրական համաձայնագրերի ներքո

Մոլդովական գյուղատնտեսական ընկերությունն արտադրում է չոր լոբի և փայտի գնդիկներ: Ընկերությունը ցանկանում է համագործակցություն հաստատել բիզնես գործընկերների հետ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի և/կամ արտադրական համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b697aeaf-7d81-410e-8e38-0586dcc74ec1>

Ծածկագիր. BOMD20211020001

Մրգային օշարակներ և զովացուցիչ ըմպելիքներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է արտադրական համաձայնագրեր

Խտացված տարբեր մրգային օշարակներ, բուրավետ օշարակներ, մրգային ըմպելիքներ և նեկտարներ, պաստերիզացված հյութեր և այլ ըմպելիքներ արտադրող լեհական ընկերությունը ներկայումս փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում և դրա սահմաններից դուրս: Ընկերությունը նաև առաջարկում է արտադրական համաձայնագրեր մասնավոր պիտակի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e55c972b-ddc5-49eb-904e-16f2b7c409f2>

Ծածկագիր. BOPL20210922002

Հունական ՓՄՁ-ն, որն արտադրում է օրգանական նոան հյութ և այլ ապրանքներ նոից, փնտրում է առևտրային գործակալության և/կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր

Հունական ՓՄՁ-ն հիմնադրվել է Հունաստանի Վոլոս քաղաքում 2012թ.-ին և ակտիվ գործունեություն է ծավալում Օրգանական նոան արտադրանքի, ներառյալ օրգանական նոան հյութի, նոան ժելեների, քաղցր և թթու նոան սոուսի և նոան խավիարի արտադրության մեջ: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ Եվրոպական և միջազգային շուկաներ մուտք գործելու համար՝ հիմնականում ուղղված մանրածախ առևտրի խանութների ցանցերին:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/afec5c8d-dc05-47a4-8ab7-0221cdd1cfd1>

Ծածկագիր. BOGR20210830001

Մակեդոնական ընկերությունը, որը մասնագիտացված է առողջ սննդի արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ միջազգային շուկաներում

Ընկերությունը, որը ներկայացված է տեղական և արտասահմանյան շուկաներում. Բալկանյան տարածաշրջանում, նաև Եվրոպայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Աֆրիկայում և Ավստրալիայում, ունի դիետիկ և դիաբետիկ արտադրանքի շարք, ձավարեղեն, սերմեր և այլուր, բնական քաղցրացուցիչներ, ֆունկցիոնալ դիետիկ ըմպելիքներ, սննդային

հավելումներ և օրգանական արտադրանք: Ընկերությունը փնտրում է միջազգային գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի և/կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0be860f6-0d20-442a-86aa-a723e35055ba>

Ծածկագիր . BOMK20210922004

Նախաճաշի շիլաների լիսովայի արտադրողը փնտրում է առևտրային գործընկերներ

Մենքի ոլորտի ընկերությունը Լիսովայից արտադրում է նախաճաշի հացահատիկի լայն տեսականի: Մյն առաջարկում է տարբեր ճաշակի (շոկո, մեղր, միրգ և այլն) և ձևերի (շրջաններ, գնդիկներ, բարձեր և այլն) ապրանքներ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերով աշխատելու համար: Կարող են առաջարկվել նաև մասնավոր պիտակով արտադրանք և արտադրական համաձայնագրեր:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cb340637-b256-4f5a-aa10-d32ad2ecfe6e>

Ծածկագիր . BOLT20211005001

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական էկոլոգիական սև արոնիայից հյութեր արտադրողը փնտրում է արոնիայի վրա հիմնված արտադրանքի մատակարարներ

Մենք արոնիայից հյութեր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է արոնիայից արտադրանքի մատակարարներ, ինչպիսիք են՝ քաղցրացված արոնիան, փոշիացված արոնիան, չորացրած արոնիան: Ընկերությունը կարող է լինել արտադրող կամ դիստրիբյուտոր: Ձեռնարկատերը փնտրում է գործընկերներ, ովքեր ցանկանում են համագործակցություն հաստատել տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9cab8b79-22d2-4a4a-a73a-6b675b20c4f0>

Թարմ մրգերի ներկրողը և դիստրիբյուտորը Ռուսիանիսից փնտրում է մատակարարներ

Ռուսիական ընկերությունը, որը մասնագիտացված է թարմ և վերամշակված (ինչպիսիք են հյութերը և խյուսերը) մրգերի մեծաքանակ վաճառքի և տարածման մեջ, ցանկանում է բացահայտել նոր հնարավորություններ՝ եվրոպական արտադրողներից ներմուծելով որակյալ մրգեր, որպեսզի ընդլայնի իր արտադրանքի պորտֆելը. համագործակցությունը կլինի տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/66de59ff-5ec9-4e02-a9e4-bfbfddbd3ab6>

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Մոլդովական տեքստիլ արտադրանքի ոլորտում գործող ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները և փնտրում է գործընկերներ արտերկրում՝ արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո

Մոլդովական ընկերությունը մասնագիտացված է թեթև և միջին տեքստիլ իրերի կարի մեջ, արտադրում է ցանկացած տեսակի հագուստ՝ շապիկներ, ներքնազգեստ, համազգեստ, աշխատանքային հագուստ, բանակային պարագաներ,



տեքստիլ ժապավեններ և ժանյակներ, այլ արդյունաբերական տեքստիլ իրեր: Ընկերությունն արտադրում է ամբողջական կամ մասնակի արտադրանք՝ կախված հաճախորդի կարիքներից:

Ընկերությունը փնտրում է ձևման, կարի և փաթեթավորման ծառայություններ՝ արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/839e3bce-8137-42fc-98fc-e94c980630fa>

Ծածկագիր. BOMD20211020002

Լիտվական տեքստիլ ոլորտի ընկերությունը, որը մասնագիտացված է կանացի հագուստի արտադրության մեջ, առաջարկում է ենթապայմանագրային և արտադրական ծառայություններ


Լիտվայում գործող կանացի հագուստի արտադրությամբ զբաղվող ընկերությունը, որն ունի ավելի քան 24 տարվա փորձ տեքստիլ արդյունաբերության ոլորտում, փնտրում է գործընկերներ արտասահմանում և առաջարկում է արտադրական և ենթապայմանագրային ծառայություններ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7180a57b-b2dc-4ea8-89bf-be617ca63ece>

Ծածկագիր. BOLT20200211001

Չեխական ընկերությունը, որն արտադրում է տեքստիլ մանկական կրման հարմարանք, պայուսակներ, պաշտպանիչ օժանդակ ժապավեններ և օրթոպեդիկ բրեկետներ, առաջարկում է կարի ծառայություններ արտադրական համաձայնագրի կամ ենթապայմանագրի ներքո

Չեխական ընկերությունը, որը փորձառու է CMT (Cut-Make-Trim/կարուձև) մանկական կրման հարմարանքների, սպորտային և կոսմետիկ պայուսակների, ընտանի կենդանիների համար նախատեսված պայուսակների և բժշկական ապրանքների, ինչպիսիք են էլաստիկ դաստակները, ծնկների հենակետերը, օրթոպեդիկ բրեկետները կամ պարանոցի օրթոպեդիկ օձիքները, տեքստիլ արտադրության ոլորտում, առաջարկում է իր ծառայությունները որպես կարող՝ արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c5c10375->

[ee82-4315-85c0-0da18b5dde36](https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cf398361-6eb4-46da-8b80-be003da182a9)

Ծածկագիր. BOCZ20210915006

Կարի ոլորտում գործող ուկրաինական ընկերությունը մատուցում է աշխատանքային հագուստի, համազգեստի և այլ միջին և թեթև տեքստիլ արտադրանքի ենթապայմանագրային ծառայություններ

Ուկրաինական ընկերությունը մասնագիտացված է թեթև և միջին տեքստիլ արտադրանքի ոլորտում, արտադրում է ցանկացած տեսակի հագուստ՝ համազգեստ, աշխատանքային հագուստ, բանակային պարագաներ և այլն: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր կպատվիրեն կտրելու և կարի ծառայություններ ըստ հաճախորդի նմուշների: Ընկերությունն արտադրում է ամբողջական կամ մասնակի արտադրանք՝ կախված հաճախորդի կարիքներից: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ենթապայմանագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cf398361-6eb4-46da-8b80-be003da182a9>

Ծածկագիր. BOUA20210914001

Գործվածքների թվային տպագրության մեջ մասնագիտացված շեխական ընկերությունն առաջարկում է իր ենթապայմանագրային ծառայությունները տեքստիլ արդյունաբերության ոլորտին

Չեխական ընկերությունը, որը կենտրոնացած է բամբակյա և պոլիեսթեր գործվածքների բարձրորակ գունավոր թվային տպագրության վրա, փնտրում է նոր գործընկերներ՝ որպես ենթակապալառու առաջարկելով իր ծառայությունները: Տարբեր հաստության, չափի, դիզայնի և նյութի այս տպագրված գործվածքները կարող են օգտագործվել կենցաղային տեքստիլ իրեր, հագուստ կամ գովազդային իրեր կարելու համար:

Բացի գործվածքների վրա առկա տպագրությունից, ընկերությունը կազմակերպում է բոլոր տեսակի գործվածքների և հագուստի ամբողջական արտադրություն: Ընկերությունը բաց է նաև հաճախորդի մասնավոր պիտակի ներքո արտադրելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/faa74899-2bf1-4e6f-a0c1-d5006aa0bdcd>

Ծածկագիր. BOCZ20210915002



Կենցաղային տեքստիլի մոլորակական արտադրողը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրով կամ արտադրական համաձայնագրով համագործակցելու համար



Մոլորակական արտադրողը մասնագիտացված է անկողնային սպիտակեղենի, անկողնային ծածկոցների, ներքնակների ծածկոցների, սփռոցների, բարձերի, համազգեստի (աշխատանքային հագուստի) և էկոլոգիական պայուսակների արտադրության մեջ: Ցանկանալով ընդլայնել իր վաճառքի շուկան միջազգային մակարդակով, ընկերությունը փնտրում է նոր բիզնես գործընկերներ տարածման կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e517a30e-12f4-43d4-b192-e2b91f661f2e>

Ծածկագիր. BOMD20210917002

Գործարար համագործակցության հարցումներ

Հագուստի ռումինական արտադրողը փնտրում է գործվածքների և արքեսուարների մատակարարներ

Ռումինական ստարտափն արտադրում է հագուստ կանանց, տղամարդկանց և երեխաների համար՝ հիմնվելով ընկերության սեփական օրիգինալ դիզայնի վրա: Ընկերությունը շահագրգռված է արտադրական գործընթացում պահանջվող հումքի մատակարարների որոնմամբ, մասնավորապես հետաքրքրված է հագուստի արդյունաբերության գործվածքների և արքեսուարների մատակարարներով: Նշված գործընկերների հետ համագործակցությունը հիմնված կլինի մատակարարման համաձայնագրերի վրա:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1e64d97b-9253-45ef-a043-0cdfb724d568>

Ծածկագիր. BRRO20211015001

Ռումինական ընկերությունը փնտրում է սպորտային ամենօրյա կոշիկների մատակարարներ արտադրական համաձայնագրերի ներքո

Ռումինական ընկերությունը վաճառում է սպորտային ամենօրյա կոշիկներ: Ընկերությունն առաջարկում է բարձրորակ սպորտային ամենօրյա կոշիկներ՝ նորարարական, օրիգինալ դիզայն փնտրող տղամարդկանց և կանանց համար: Ընկերությունը շահագրգռված է ընդլայնել իր բիզնես գործընկերների ցանցը՝ բացահայտելով մասնավոր պիտակի ներքո

կոշիկի նոր միջազգային մատակարարներ: Շահագրգիռ գործընկերների հետ համագործակցությունը հիմնված կլինի արտադրական համաձայնագրերի վրա:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4ec362cd-9b58-472f-9807-d35c7e27df68>

Ծածկագիր. BRRO20200918001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Բետոնի շաղախի պլաստիֆիկացնող նյութերի արտադրության մեջ մասնագիտացված ուկրաինական ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրերով

Ուկրաինական ընկերությունն ակտիվ գործունեություն է ծավալում արդյունաբերական, քաղաքացիական և հատուկ շինարարության մեջ օգտագործվող բետոնե շաղախի պլաստիֆիկացնող նյութերի արտադրության, տարբեր նպատակների համար նախատեսված օբյեկտների վերանորոգման ոլորտում: Ընկերությունը փնտրում է շինանյութերի դիստրիբյուտոր, ով ցանկանում է ընդլայնել իր արտադրանքի տեսականին տարածման ծառայությունների



համաձայնագրով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/65964998-8ec8-40cb-83b3-0f38131d7391>

Ծածկագիր . BOUA20211006001

Փորձ ունեցող իսրայելական արտադրական ընկերությունը, որը մասնագիտացված է արդյունաբերական հովացման աշտարակներում, փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների կամ աութօրսինգի համաձայնագրերով:

Ավելի քան 50 տարի իսրայելական ընկերությունը եղել է հովացման աշտարակի նախագծման և արտադրության առաջամարտիկ, որի ընթացքում այն հաստատվել է որպես հովացման աշտարակի առաջատար մատակարար էլեկտրաէներգիայի, նավթի և գազի և քիմիական արդյունաբերության ոլորտներում: Ընկերությունը ցանկանում է կնքել տարածման ծառայությունների համաձայնագիր՝ արտասահմանում իր արտադրանքի տարածումն ընդլայնելու նպատակով: Հնարավոր է նաև աութօրսինգի համաձայնագրի ներքո համագործակցություն:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/411604ff-1197-4e4d-ab3d-fcfe45d102f8>

Ծածկագիր. BOIL20211024001

Ընդհանուր սարքավորումների բաղադրիչների ուկրաինական արտադրողը փնտրում է արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրեր

Վաղուց կայացած, կայուն և միջազգային փորձ ունեցող ուկրաինական ընկերությունը մասնագիտացված է հանքարդյունաբերության, մետալուրգիական, էներգետիկ և գյուղատնտեսական սարքավորումների մասերի և բաղադրիչների արտադրության մեջ: Ընկերությունն ապահովում է սարքավորումների արտադրության բոլոր փուլերը՝ մեկ միավորից մինչև խոշոր սերիաներ արագ առաքման ժամկետներում: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ենթապայմանագրային և արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/bacb1081-b122-4b77-8dcc-e650a93e794f>

Ծածկագիր. BOUA20211020001

Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացված է բնական և արհեստական քարերի մշակման մեջ, փնտրում է գործընկերներ ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո



Ընկերությունը Լիտվայից մասնագիտացված է բնական և արհեստական քարերի կտրման, ձևավորման և հարդարման գործում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8a8ccb7e-ada8-4c84-9a16-eb88fb62fcd7>

Ծածկագիր . BOLT20200219001

Ուկրաինական ինժեներական և խորհրդատվական ընկերությունն իր ծառայություններն է առաջարկում աութորսինգի կամ ենթապայմանագրի ներքո

Ուկրաինական ընկերության հիմնական գործունեությունը տնտեսության տարբեր ոլորտներում շինարարական նախագծերի և դրանց ծախսերի կառավարման, ինչպես նաև շինարարության հետ կապված այլ ծառայությունների մատուցումն է: Համագործակցությունը պետք է լինի աութորսինգի համաձայնագրի կամ ենթապայմանագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/45993b77-7286-496b-bef4-c837439a3361>

Ծածկագիր . BOUA20210302001

Շինարարության ոլորտի ընկերությունը Ուկրաինայից, որը գործում է պողպատե հատակի և տանիքի համակարգերում, փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ

Մեծ Բրիտանիայի ընկերությունը մասնագիտացված է պողպատե հատակի և տանիքի համակարգերի նախագծման, մատակարարման, արտադրության և տեղադրման ոլորտում: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր նորարարական շինարարական արտադրանքը նոր շուկաներ արտահանելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ea2348e9-4f48-486e-aa06-6e152b3fab4c>

Ծածկագիր . BOUK20210921001

Գործարար համագործակցության հարցումներ

Մեծ Բրիտանիայից դիզայները փնտրում է մոդուլային տների կամ այգիների գրասենյակներ արտադրող՝

համատեղ ձեռնարկության համար:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիզայներական թիմը ռազմավարական համագործակցություն է փնտրում արտադրողի հետ՝ այգիների գրասենյակների և ստուդիաների եզակի տեսականի մշակելու համար: Ընկերությունը փնտրում է համատեղ ձեռնարկության համագործակցություն արտադրողի հետ, ով կարող է զարգացնել և նորարարություն կատարել մոդուլային շենքերում և կայուն բացօթյա կառույցներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/55927a2f-f005-4d24-b198-5739228799b1>

Ծածկագիր. BRUK20211020001

Չեխական ընկերությունը, որը զբաղվում է գրասենյակների և տների ինտերիերի սարքավորումներով և կահույքով, փնտրում է մատակարարներ եվրոպական երկրներից՝ տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Ներմուծման-արտահանման ոլորտից երիտասարդ չեխական ընկերությունը, որն ակտիվ է ինտերիերի, էքստերիերի և կահույքի նորարարական ապրանքների առևտրում, ցանկանում է ընդլայնել տների, դպրոցների, գրասենյակների կամ տեխնիկական շենքերի համար նախատեսված ապրանքների իր կատալոգը: Ընկերությունը շահագրգռված է համագործակցել այլ երկրների նման ապրանքների արտադրողների հետ՝ տարածման ծառայությունների և առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d9176682-51f0-4e0f-aa57-269d788a9198>

Ծածկագիր. BRCZ20211001001

R&D



[EUREKA կամ EUROSTARS] Կորեական ընկերությունը փնտրում է գիտահետազոտական և մշակման գործընկերներ՝ պղնձի սինթերով նյութ մշակելու համար՝ նախատեսված էլեկտրաէներգիայի կիսահաղորդչային փաթեթների միացման համար:

Էլեկտրոդային փաթեթների համար նյութական լուծումներ տրամադրող կորեական ընկերությունը փնտրում է R&D գործընկեր՝ կիսահաղորդչային փաթեթների միացման համար պղնձե սինթերով նյութ մշակելու համար: Պղնձի մակերևութային օքսիդի թաղանթի կրճատման վերաբերյալ գիտելիքներ և փորձ ունեցող գործընկերոջ հետ կորեական ընկերությունը պատրաստվում է դիմել EUREKA կամ EUROSTARS ծրագրին՝ հետազոտական համագործակցության համաձայնագրով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b70a837b-fdeb-4254-9cbe-cdb7f441254d>

Ծածկագիր. RDKR20211022001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Բուլղարական թվային ոլորտի ընկերությունը փնտրում է ենթապայմանագրային և/կամ աութսորսինգային համաձայնագրեր

Բուլղարական թվային փոխակերպման խորհրդատվական ընկերությունը մասնագիտացված է ապարատային և ծրագրային ապահովման վերջնական մշակման ոլորտում: Ընկերությունը հետաքրքրված է աութսորսինգային և ենթապայմանագրային համաձայնագրերով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f6fa8566-1894-42f9-8eb1-02d2cdcee118>

Ծածկագիր. BOBG20210705001

Ռումինական ընկերությունը , որը գործում է արդյունաբերական և ավտոմատացման ծրագրերի ոլորտում, առաջարկում է աութսորսինգային և ենթապայմանագրային համագործակցություն այն ընկերություններին, որոնք փնտրում են ավտոմատացման ծառայություններ

Ռումինական ՓՄՁ-ն առաջարկում է իր փորձը արդյունաբերական ավտոմատացման և հատուկ ծրագրային ապահովման մշակման ոլորտում ավտոմատացման լուծումներով հետաքրքրված գործընկերներին: Փնտրվող գործընկերը պետք է ակտիվ լինի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտադրությունը, ավտոմոբիլաշինությունը, մետալուրգիան, ջուրը, ցեմենտը, հանքարդյունաբերությունը, նավթը և գազը, էներգետիկան և շահագրգռված լինի ենթապայմանագրային կամ աութսորսինգի վրա հիմնված արդյունաբերական ավտոմատացման լուծումներով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/72d6595b-76f5-4d56-902d-503360bc7641>

Ծածկագիր. BORO20211102002

Իտալական ստարտափը փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության համաձայնագրերով՝ իր բարձր մակարդակի անվտանգություն ունեցող հաղորդագրությունների հավելվածի համար

Իտալական ստարտափը, որն ակտիվ է թվային ոլորտում, փնտրում է գործընկերներ իր հաղորդագրությունների հավելվածի համար՝ բարձր մակարդակի անվտանգությամբ, հասկապես հարմար ընկերությունների և մասնագետների համար: Նախատեսվող համագործակցությունը առևտրային գործակալության համաձայնագիրն է:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/785ca4ac-31d2-4ada-9ba9-ab8e1644f95f>

Ծածկագիր. BOIT20210805002

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական SS ընկերությունն առաջարկում է հանդես գալ որպես գործակալ ծրագրային ապահովման և հավելվածների մատակարարների համար

Լեհական ընկերությունը, որը ստեղծվել է 1998 թվականին, ընկերություններին տրամադրում է համապարփակ SS ծառայություններ: Ընկերությունը համագործակցություն կհաստատի տարբեր տեսակի ծրագրային ապահովման մատակարարների հետ լեհական շուկա մուտք գործելու ցանկություն ունեցող ձեռնարկությունների համար: Ընկերությունն առաջարկում է համագործակցություն՝ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9e995f2c-5332-46b5-a689-4d45b5ff6291>

Ծածկագիր. BRPL20210614001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

**Պրոֆեսիոնալ մազերի խնամքի միջոցներ արտադրող
լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Լեհական ընկերությունը, որը հիմնադրվել է 2003 թ. -ին, մասնագիտացված է պրոֆեսիոնալ մազերի խնամքի և վերականգնման ապրանքների արտադրության ոլորտում: Արտադրական գործընթացի ընթացքում, ընկերությունն օգտագործում է իր սեփական ֆորմուլաները՝ հիմնված կոլլագենի և կերատինի և այլ բաղադրիչների վրա՝ ներառյալ օրգանական: Տեղական շուկայում ունենալով հաստատված ցանց, ընկերությունը պատրաստ է ներգրավել բիզնես գործընկերներին արտերկրում՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8e97c43a-aec3-4a00-a456-ccc8f946a2fe>

Ծածկագիր. BOPL20210924004



**Չեխական ընկերությունը, որն առաջարկում է եզակի կոսմետիկ բուժում (դեպի
վերականգնողական բժշկություն) ԴՆԹ-ի միջոցով, փնտրում է տուրիստական
գործակալություն կամ տուրօպերատոր՝ առևտրային գործակալության համաձայնագրի
ներքո**

Չեխական ընկերությունը մասնագիտացված է բժշկական նպատակով ճանապարհորդություններում, մասնավորապես այն կենտրացած է խնամքի ոլորտում՝ օգտագործելով ԴՆԹ: Ընկերությունը փնտրում է գործակալ (օրինակ՝ տուրօպերատոր կամ տուրիստական գործակալություն) բժշկական ճանապարհորդության ոլորտում կամ կոսմետիկ բուժման ոլորտում, որը կներկայացնի այս ընկերությունը արտաքին շուկաներում՝ առևտրային գործակալության համաձայնագրերով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f5d530c3-aab2-43d3-80e1-c3a26e5d64fb>

Ծածկագիր. BOCZ20210915003

Օզոնային կոսմետիկայի ոլորտից իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտոր եվրոպական երկրներում

Փոքր իսպանական ընկերությունն արտադրում և շուկա է հանում օզոնով (O3) բարձրորակ կոսմետիկա` Detox O3 քսուք և մասուրի սերմի O3 շիճուկ: Ընկերությունն օգտագործում է նորարարական գործընթաց, քանի որ այն ապավինում է նանոտեխնոլոգիային, ինչը արտադրանքը դարձնում է շատ ավելի արդյունավետ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ էսթետիկայի, կոսմետիկայի, դեղագործության, պարաֆարմացիայի և խնամքի ոլորտներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8fc9e39f-8d6e-4a5e-aca2-828bb3731d78>

Ծածկագիր. BOES20200102001



Առողջապահություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Լիպոսոմային սննդային հավելումներ արտադրողը փնտրում է դեղագործական ապրանքների կամ առողջարար սննդի մեծածախ վաճառողներ՝ որպես դիստրիբյուտոր գործընկերներ

Լիպոսոմային սննդային հավելումներ արտադրող գերմանական ՓՄՁ-ն փնտրում է դեղագործական արտադրանքի կամ առողջարար սննդի մեծածախ վաճառողներ՝ որպես դիստրիբյուտոր գործընկերներ: Արտադրանքը զգալիորեն ավելացել է կենսամատչելիությունը՝ համեմատած ստանդարտ սննդային հավելումների՝ լիպոսոմներում ակտիվ նյութերի պարփակման շնորհիվ: Տարածման ծառայությունների համաձայնագրեր են առաջարկվում հնարավոր գործընկերներին Եվրոպայում և ամբողջ աշխարհում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/475fe2a2-165c-4513-9ac5-5ca766cb99d6>

Ծածկագիր. BODE20210810001



Բելգիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալություններ Եվրոպայից դուրս և առաջարկում է ենթապայմանագրային և արտադրական ծառայություններ

Բելգիական ընկերությունը դեղագործական և սննդային հավելումների արտադրող է: Այն մշակում է իր սեփական արտադրանքը, նաև որպես ենթակապալառու արտադրում է մեծ տեսականի: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ ոչ ԵՄ երկրներում, ինչպես նաև առաջարկում է ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրեր դեղագործական ընկերություններին:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a3e39e6c-5b4b-4e0d-8aaf-f7db8fd59938>

Ծածկագիր. BOBE20210901001

Հիվանդների համար ախտորոշիչ փաթեթների և թեստային համակարգերի ռուսական մշակողը փնտրում է արտասահմանյան դիստրիբյուտորներ

Նովոսիբիրսկի տարածաշրջանից ռուսական ընկերությունը մշակում և արտադրում է

մարդկանց հիվանդությունների ախտորոշման բժշկական թեստային համակարգեր: Արտադրանքի տեսականին ներառում է թեստային համակարգեր, ֆերմենտային իմունային անալիզ, բազմակոմպլեքս ախտորոշում, ՊՇՌ թեստեր: Ընկերությունը շահագրգռված է բժշկական ոլորտից վստահելի գործընկերներ գտնելով՝ երկարաժամկետ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0d59209a-b197-4dc5-b52a-ed42687ce8db>

Ծածկագիր. BORU20211019001

Գործարար համագործակցության հարցումներ

Բուժման համար կենսակերամիկայի ռուսական արտադրողը փնտրում է ցիրկոնիումի երկօքսիդի մատակարարներ Աֆրիկայից, Ասիայից և ԵԱՏՄ-ից

Նովոսիբիրսկից ռուսական ընկերությունը զբաղվում է կերամիկական բժշկական արտադրանքի մշակմամբ (ազդրային գլխի գնդիկներ ազդրի էնդոպրոթեզների համար): Ընկերությունը շահագրգռված է Աֆրիկայից, Ասիայից և ԵԱՏՄ-ից գործընկերներ գտնելով, որոնք կմատակարարեն ցիրկոնիումի երկօքսիդ: Համագործակցությունը հիմնված է լինելու մատակարարման ծառայությունների համաձայնագրի վրա:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c1b979e3-6fa6-48cd-894b-7afb57718252>

Ծածկագիր. BRRU20211011001

Այլ ոլորտներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Մերբական ընկերությունն առաջարկում է սննդամթերքի և ակոհոլային խմիչքների իսկության վերլուծական լաբորատոր ծառայություններ՝ հիմնված նորարարական իզոտոպային մեթոդի վրա՝ աուսոսրսինգի համաձայնագրի միջոցով անօրինական արտադրության պրակտիկաների բացահայտման համար:

Մերբական ընկերությունը մշակել է առաջատար տեխնոլոգիա, որն ի վիճակի է որոշել բուսաբանական ծագումը, շաքարավազը և/կամ ջրի ավելացումը գինու, մրգային հյութերի/խտանյութերի, մեդրի և ուժեղ սպիրտների մեջ: Նորարարությունը արտոնագիր է սովել ավելի քան 30 երկրներում: Այս իզոտոպային մեթոդն ընդունվել է OIV-ի (Vine and Wine միջազգային կազմակերպության) փորձագետների կողմից՝ իբրև գինու կեղծումը հայտնաբերելու նոր մոտեցում: Ընկերությունը փնտրում է արդյունաբերական գործընկերներ, ովքեր հետաքրքրված են աուսոսրսինգային համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5f532d53-daa8-4e42-bfae-7b72df9aaa8a>

Ծածկագիր. BORS20211021001

Արդյունաբերական և առևտրային օգտագործման համար թիթեղյա տարաներ արտադրող քաթարական ընկերությունը փնտրում է միջազգային գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո

Քաթարից թիթեղյա տարաների և կոնաձև սկոտեղների արտադրողն առաջարկում է փաթեթավորման լուծումներ, որոնք արված են այնպիսի ապրանքների համար, ինչպիսիք են՝ սննդամթերքը, խմիչքները, ուտելի յուղերը, քսանյութերը, ներկերը, սոսինձը, լուծիչները և քիմիական նյութերը: Ընկերությունը նաև մատուցում է կտրատման, դրոշմման, թիթեղյա թերթերի վրա տպագրման ծառայություններ: Ընկերությունը ցանկանում է կնքել տարածման ծառայությունների համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/96e8416f-ce39-433c-a37f-de67969fcf7f>

Ծածկագիր. BOQA20211027003

Իսրայելական ընկերությունը, որը մասնագիտացված է պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերության բալիստիկ կերամիկական նյութերում, փնտրում է արտադրական կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր

Իսրայելական ընկերությունը մշակում և արտադրում է հատուկ լուծումներ բարձրորակ բալիստիկ զրահների համար՝ օգտագործելով ժամանակակից կերամիկական նյութեր՝ զրահատեխնիկայի, ինքնաթիռների, ծովային և տրանսպորտային միջոցների զրահատեխնիկայի շուկայի սպասարկման համար: Այս համաշխարհային առաջատար ընկերությունը մասնագիտացված է հարմարեցված համակարգերի, մոդուլների և

դետալների նախագծման և արտադրության մեջ, որոնք պատրաստված են տարբեր տիպի բարձրորակ առաջադեմ կերամիկայից. ընկերությունը փնտրում է գլոբալ համագործակցություն՝ արտադրական, համատեղ ձեռնարկության, տարածման ծառայությունների կամ լիցենզային համաձայնագրի կամ ենթապայմանագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fbefcc80-9cd0-4719-89bf-03e808b4cee6>

Ծածկագիր. BOIL20210930001

Գերմանական ընկերությունը, որն ունի կոմերցիոն աջակցության ծառայությունների ամբողջական տեսականի, առաջարկում է աութսորսինգի համաձայնագրեր

Գերմանական բիզնեսին աջակցող ընկերությունը փնտրում է աութսորսինգային համաձայնագրեր միջազգային ընկերությունների և տեխնոլոգիական ստարտափների հետ, մասնավորապես՝ կենտրոնացած ծրագրային ապահովման, կիրառական տեղեկատվության, արդյունաբերության 4.0, սենսորների և արդյունաբերական սարքավորումների, ինչպես նաև արդյունաբերական մատակարարումների վրա: Փորձառու ծառայություններ մատուցողը մասնագիտացված է հաշվապահական հաշվառման, աշխատավարձի/մարդկային ռեսուրսների, վերահսկման և գնումների մեջ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1ca36406-a9e3-4595-a34b-179a45507826>

Ծածկագիր. BODE20201208001

Բոսնիա և Հերցեգովինայից փայտե կահույք արտադրողը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրերի ներքո

Ընկերությունը գտնվում է Բոսնիա և Հերցեգովինայի հյուսիսարևմտյան մասում: Փայտե կահույք արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրերի շրջանակներում համագործակցության համար: Ընկերության ամենամեծ առավելությունը մրցակցության համար լավ դիզայնն ու արտադրանքի որակն է:



<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7895289c-dbc2-4a48-b622-6e031dd05c54>

Ծածկագիր. BOBA20211024002

Բարձրահարկ շինաշխատանքների համար բարձրացնող սարքավորումների (սանդուղք, շարժասանդուղք) արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է օտարերկրյա

գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի և/կամ արտադրական համաձայնագիր կնքելու համար:

Ռուսական արտադրողը Լենինգրադի մարզից զբաղվում է բարձրության վրա աշխատանքի համար ժամանակակից և հուսալի սարքավորումների արտադրությամբ (աստիճաններ, շարժասանդուղքներ և այլն): Ընկերության արտադրանքը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, որոնք հաստատված են ISO 9001 վկայականով: Ընկերությունը փնտրում է վստահելի արտասահմանյան գործընկերներ՝ տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6cfdffff-70bf-4222-8bc8-6f90a40549ec>

Ծածկագիր. BORU20211007001

Անձնակազմի և տրանսպորտային միջոցների պաշտպանության, ներառյալ օդային, ցամաքային և ծովային սարքավորումների ռուսական զրահապատ կերամիկայի արտադրողը փնտրում է օտարերկրյա գործընկերներ կամ դիստրիբյուտորներ

Նովոսիբիրսկից ռուսական ընկերությունը զբաղվում է զրահապատ կերամիկայի արտադրությամբ: Արտադրանքը պատրաստված է ալյումինի օքսիդից Al2O3 և բորի կարբիդ B4C տարբեր երկրաչափական ձևերի, ներառյալ կրկնակի կորության մոնո վահանակներ: Զրահապատ կերամիկան օգտագործվում է ռազմական տեխնիկական պաշտպանելու և որպես մարդկանց մարմնի պաշտպանություն: Ընկերությունը փնտրում է օտարերկրյա գործընկերներ տարածման ծառայությունների և/կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8ec29e24-515c-4a05-8034-ce74cd3068a5>

Ծածկագիր. BORU20211011001

Մեծ Բրիտանիայի լազերային օպտիկա արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Մեծ Բրիտանիայի ընկերությունների խումբը, որը հիմնադրվել է ավելի քան 30 տարի առաջ, Ինֆրակարմիր և CO2 լազերային օպտիկաների նախագծման և արտադրության մեծ փորձով, ինչպես նաև հարակից աջակցության ծառայություններով փնտրում է առևտրականներ և ինտեգրատորներ լազերային ոլորտում՝ գործակալության և տարածման համաձայնագրերի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cbfc8f6a-3160-42d2-99eb-e372cf7caf49>

Ծածկագիր. BOUK20201015001

Գործարար համագործակցության հարցումներ

Բրիտանական ընկերությունը փնտրում է քուլք/բալասան արտադրող

Բրիտանական ընկերությունը եվրոպական արտադրողին առաջարկում է արտադրական համաձայնագիր՝ քերծվածքների դեմ բալասանների՝ կանխարգելման միջոցներ արտադրելու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/77e5538f-0e86-4fe1-a75f-04d579c0862f>

Ծածկագիր. BRUK20210311001


Լեհական երիտասարդ ընկերությունը պատրաստ է հանդես գալ որպես դիստրիբյուտոր՝ վաճառելու այլ ընկերությունների արտադրանքը ավիացիայի, ավտոմոբիլային և պլաստմասսայի վերամշակման ոլորտներից:

Լեհական երիտասարդ ընկերությունը, որը մասնագիտացված է նորարարական տեխնոլոգիաներ տրամադրելու մեջ, առաջարկում է իր հնարավորությունները լինել այլ ընկերությունների արտադրանքի դիստրիբյուտոր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4e734157-d860-4239-82cf-1deabe9113bd>

Ծածկագիր. BRPL20211011001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Առողջապահության ոլորտում մասնագիտացված ֆրանսիական մասնավոր կլինիկաների ցանցը փնտրում է հետազոտական/տեխնիկական համագործակցության համաձայնագրեր

Ֆրանսիական մասնավոր կլինիկաների ցանցն առաջարկում է հիանալի բժշկական միջավայր առողջապահական նախագծերի վավերացման համար: Նրանց կլինիկաները դասվում են Ֆրանսիայի լավագույն հիվանդանոցների շարքին: Այնտեղ զբաղվում են բժշկության և վիրաբուժության բոլոր մասնագիտություններով: Պահանջվում են հետազոտական և տեխնիկական համագործակցության համաձայնագրեր: Նրանց հիմնական առաջնորդները և նրանց կլինիկական հետազոտությունների բաժինը կաջակցեն իրենց գործընկերներին իրենց բժշկական նորարարությունների զարգացման յուրաքանչյուր քայլում՝ սկսած գիտահետազոտական գործընթացից մինչև կլինիկական հետազոտություն:

Ծածկագիր. TOFR20211026001

Իսպանական ընկերությունն առաջարկում է իսելացի շարժունակության լուծում՝ տրանսպորտային միջոցների ամենօրյա զբաղվածությունը օպտիմալացնելու համար

Իսպանական ընկերությունը նպատակ ունի կազմակերպել մարդկանց ամենօրյա երթուղիները դեպի իրենց պարտականությունները թվային հարթակի միջոցով, որտեղ վարորդները տեղադրում են անվճար նստատեղեր, իսկ ուղևորները կարող են պատվիրել դրանք: Ընկերությունը փնտրում է տեխնիկական համագործակցություն, հետազոտական համագործակցություն կամ առևտրային համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/27e64bf7-4493-4b13-8797-ba2ed3c81d39>

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Իտալական ընկերությունը շինարարության ոլորտից փնտրում է շենքերի տեղեկատվական մոդելավորման ծրագրային լուծումներ՝ արտադրական գործընթացի ստանդարտացման համար

Օդորակման, ջեռուցման, սառեցման և ջրի համակարգեր արտադրող իտալական ընկերությունը փնտրում է շենքերի տեղեկատվական մոդելավորման ծրագրային լուծումներ, նվազագույնը TRL 5, արտադրության գործընթացի թվայնացման, ստանդարտացման և ինտեգրված կառավարման և արդյունաբերական գործարանների նախապատրաստման համար: . Գործընկերները գործելու են տեխնիկական համագործակցության համաձայնագրով: Այս հարցումը բաց նորարարական մարտահրավերների ծրագրի մի մասն է:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ae723a81-855d-4875-96f3-00e80e8bb40c>

Ծածկագիր. TRIT20211026005

Մնունդ արտադրող իտալական ընկերությունը փնտրում է տեխնոլոգիական լուծումներ կաթնամթերքի գոմերում ջերմոցային գազերի արտանետումների տվյալների հավաքագրման ավտոմատացման և թվայնացման համար

Իտալական առաջատար կորպորացիան արտադրում և մատակարարում է կաթ և կաթնամթերք: Ընկերությունը փնտրում է նորարարական կենդանի աուդիտի և տվյալների հավաքագրման լուծումներ, նվազագույնը TRL 5, իր մատակարարման ցանցում կաթնամթերքի գոմերում ածխածնի հետքի գնահատման ավտոմատացման և թվայնացման համար: Ընկերությունը շահագրգռված է տեխնիկական համագործակցության համաձայնագրով: Այս հարցումը բաց նորարարության մարտահրավերի մի մասն է:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/63325ba5-5dc9-4706-b41d-435fd5a7e7a0>

Ծածկագիր. TRIT20211026004

Նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2021 թ.-ի նոյեմբեր և 2022 թ.-ի հունվար ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Նոյեմբեր

15/11/2021	<p>EDICA Healthcare Brokerage Event 2021</p> <p>Դյուսելդորֆ (Գերմանիա)</p> <p>Միջոցառման նպատակն է աջակցել ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական հաստատություններին Եվրոպայում գործընկերներ գտնելու՝ գործարար համագործակցության, արտադրանքի զարգացման, արտադրության և լիցենզավորման համաձայնագրերի, համատեղ ձեռնարկությունների կամ գործընկերության այլ տեսակների համար:</p> <p>http://www.medica-tradefair.com/</p>
24/11/2021	<p>DEICy 2021 Digital Economy, Internet of Things, Cybersecurity - global challenges & pportunities in digital transformation - Digital Economy Lab University of Warsaw 2021</p> <p>Լեհաստան-Աոցանց</p> <p>Համագործակցության հաստատման միջոցառման նպատակն է ստեղծել</p>

	<p>հետազոտական և զարգացման հաստատությունների, բիզնեսի և արդյունաբերության գործընկերների, եվրոպական և ազգային հաստատությունների, ոչ կառավարական կազմակերպությունների սերտ հարաբերություններ՝ տնտեսական, հասարակական ոլորտներում, թվային փոխակերպման ավելի լավ իմացության և ընկալման համար հետևյալ ոլորտներում. շուկա, աշխատանք, կառավարություն, սպառում, արտադրություն, անվտանգություն և կարևոր լուծումներ ոլորտներում՝ բանագանց, կիրառական տեխնոլոգիաներ:</p> <p>https://deicy2021.b2match.io/</p>
--	--

Հունվար

<p>23/01/2022</p>	<p>Brokerage Event at the World Expo Dubai 2020</p> <p>ԱՄԷ (Դուբայ)</p> <p>Նախատեսվող միջոցառումը շեշտը կդնի եվրոպական տնտեսության համար առաջնահերթ ոլորտների վրա՝ կայուն զարգացում, շրջանաձև տնտեսություն, S2S, տրանսպորտ և լոգիստիկա, նորարարություն և Արդյունաբերություն 4.0՝ համահունչ մնալու էքսպո-ի թեմային՝ «Մտքերի միացում, ապագայի ստեղծում»:</p> <p>Համագործակցության հաստատման միջոցառման մասնակցության վճարը յուրաքանչյուր մասնակցի համար կազմում է 125 եվրո:</p>
<p>27/01/2022</p>	<p>Health Tech Hub Styria Pitch & Partner 2022 (HTH 2022)</p> <p>Գրազ (Ավստրիա)</p> <p>Health Tech Hub Styria Pitch & Partner 2022-ը (HTH 2022) հիբրիդային միջոցառում է, որը կենտրոնացած է առողջապահության և կենսատեխնոլոգիայի վրա: Այն առաջարկում է ձեռք միջազգային հիմնական ելույթներ, կորպորատիվ զանգեր,</p>

	<p>ներդրողների առաջարկներ, նախապես կազմակերպված B2B հանդիպումներ և այլն:</p> <p>http://www.hth-styria.com</p>
--	---

ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _ SENIOR EXPERTEN SERVICE (SES)

SES ծրագրի առավելությունները

- Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում
- Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում
- Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում
- Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում
- Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար
- Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից
- Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից
- Հանրային և բժշկական հիմնարկները
- Կրթական ձեռնարկությունները
- Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E mariam.mazhinyan@armenien.ahk.de

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Ղուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական նորարարությունների խորհուրդ և ՓՄՁ գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Եվրոպական նորարարությունների խորհուրդ և ՓՄՁ գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: